7. ՋԱՆԱՎԱՐԸ

Ընում ա, չընում մին ջանավար։ Էս ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծիյի, ասըմ.— Ա՛ ծի, քյըեզ կօտիմ։

Ծին ասըմ ա։— Ինձ կարիլ չըս օտիս՞, յըես կըճղակնի օնիմ, քացի կտա՞մ։

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին կյումաշի, ասըմ։ — Ա՛ կյումաշ, յըես քյըեզ կօտիմ։

— Կարիլ չըս օտի՞ս, եխտոտ ըմ, առաչ ինձ լըվաց, ետավ։

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծըմակ։ Ըտեղ նըստըմ ա, ինքյը ուրան քընենքյ անըմ, ասըմ. «Ես պըտըհեցի մին ծիյի, ասից՝ դրոնաղնի օնիմ, ամմա մըղափուն լոխ կըերած պիտի, մինակ դրոնաղնին թողած։ Ցըես պըտըհեցի մին կյումաշի, թողած չըպիտի, կըերած պիտի, մինակ կաշին թողա՞ծ։ Ընդրանա ետը յըես պըտըհեցի մին վըեխճարի ա՞խ, ա՞խ, եշած չպիտի, կըերած պիտի, աշկերս հրետան քյընա՞ց»։

Էտ վախտն էլ չորանը ուրան շընեբավը էն ար խիլլա հեռու նըստած։ Չորանը տըեսնըմ ա էտ դրոդոտված կյուլ-ջանավարին, թաքուն-թաքուն կյամ ա, հաքյվան փըռնըմ, շընեբն էլ մին ղոլան ըն յրա պըրծընըմ։

Էտ դաշրըմը կյուլն ասըմ ա.— Ա՞խ, էս հի՞նչ ըրի, տու մի ասիլ, վըեր խոսիլըն էլ ա ղրդրղա, խոսիլըն է՞, խոսիլը՞՞, հալա օտիլը ջրհաննամը... Խոսի՞լը...